հան ձեռքով, որի կառուցած «յոյժ գեղեցիկ յօրինուածովք, գմբէթայարկ և եռախորան, հաստահեղոյս և տաշածոյ վիմօք» եկեղեցին ոգևորությամբ նկարագրում է Սիսական նահանգի պատմագիրը[38]: Մեծամեծ կալվածքներով ապահովված այս վանքը, ուր հենց սկզբից հավաքվել էին «եղբարք սրբակրօն, ավելի քան q100», այնուհետև հատուկ հոգատարության առարկա դարձավ Կապանի և Բաղաբերդի տերերի կողմից: Այստեղ վանահայր նստեց հիմնադրի՝ Ջիվանշիր իշխանի որդին՝ Վահանը, որը հետո դարձավ Տաթևի եպիսկոպոս և մի կարճ ժամանակամիջոց՝ Հայոց կաթողիկոս: Սա էլ նոր շենքերով փայլեցրեց մենաստանը. «...յետ բազում ժամանակաց յաւուրս Գրիգորի՝ թագաւորի Բաղաց, ի Շահանդխտոյ թագուհւոյն և ի Կայտայէ և ի Սենիքերիմայ թագաւորէ բազում և գեղեցիկ շինուածովք առավել գեղեցկացուցին զվանսն Վահանու»[39]: Այստեղ «հանգուցեալ կան ի շիրմի բազում թագաւորք և թագուհիք Աղվանից և Բաղաց, և բազում իշխանք փառաւորք Սիսական աշխարհիս»[40]:

Վանքի ավերակները պահպանվել են Հալիձորի բերդից մեկ ու կես-երկու կիլոմետր դեպի արևմուտք, դեռ Կապան քաղաքին չհասած, Ողջի գետի նույն աջ ափին, մի խիտ անտառի մեջ: Մի կածան այստեղ բաժանվում է դեպի հարավ գլխավոր ճանապարհից այն կետում, որն այժմ կոչվում է Զոր կամուրջ, հնում՝ Ղուրու քարի, երևի հին կամրջի վայրում, որը այժմ փոխարինված է փայտե ձողապատ կամրջով: Կառուցումների այժմյան վիճակը պարզ գաղափար է տալիս վաղեմի պլանի և ճարտարապետական մանրամասնությունների մասին: Ամբողջ կոմպլեքսը տեղավորված է մի փոքրիկ հարթ հրապարակի վրա, որը երկու կողմից թեքված է դեպի ոչ խոր ձորակները, իսկ ետևից, որոշ հեռավորության վրա, վերջանում է սեպ բարձրացող ժայռերի ստորոտին:

Այդ վանքը իր ապահովության համար հույսը դրած է եղել ոչ այդ քարաժայռերի դժվարամատչելիության, ոչ էլ հարևան ձորերի համեմատաբար փոքր խորության վրա: Նա չի շրջապատել իր բազմանդամ միաբանությունն և կուտակած եկեղեցական սպասներն և այլ հարստությունները հաստահիմն պարիսպներով՝ ավերակների մեջ պարիսպների շարքերը չեն նշմարվում: Նա վստահացել էր ձորի աշխարհիկ տերերի կառուցած ամրությունների սիստեմին. նրա պաշտպանությունը այդ կողմի իշխանական տան տոհմական պատվի գործ էր:

Այդ վստահությունը չունեին Սիսական նահանգի այլ խոշոր սրբավայրերը, որոնք այդ խառը ժամանակներում պետք է իրենք մտածեին իրենց ինքնապաշտպանության մասին, և ոչ միայն կրոնական առանձնարաններ էին, այլ վեր էին ածված ռազմական պաշտպանական կետերի, որոնց պարիսպների ետև կարող էին վտանգի ժամանակ ապաստան գտնել ոչ միայն միաբանությունը և նրա տնտեսության հետ կապված մարդիկ, այլև մերձակա գյուղերի բնակչությունը: Այդպիսի ամուր պարիսպներով իրեն պատել է օրինակ՝ նույն Ողջի գետի ավազանում, Բեխ գյուղից արևելք, անտառների բարձր գոտում ծվարած Անապատը, որը տեղացիների լեզվով կոչվում է Արիստակէս: Դրա

---

38 Օրբէլեան Ստ., անդ., գլ. ԽԵ, էջ 239:

39 Անդ., էջ 241:

40 Անդ., էջ 240: